TELCELL

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Հարգելի՛ Բաժնետեր (անվանատեր),

2025 թվականի հունիսի 03-ին, ժամը 15:00-ին, **«ՖՈՒԴՊԱՐԿ ԲԱՅ ԴԱՈՒՆԹԱՈՒՆ»** (FOODPARK BY DOWNTOWN) կենտրոնում (հասցե՝ ՀՀ, 0002, ք.Երևան, Իսակովի 11), տեղի է ունենալու «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԸ՝

ՀԱՐՑ 1: «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2024 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

ՀԱՐՑ 2: «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի արտաքին աուդիտի կողմից հաստատված Ընկերության 2024թ. ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին

ՀԱՐՑ 3: «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թվականի աուդիտն իրականացնող անձի հաստատում

ՀԱՐՑ 4: 2024թ. տարեկան շահույթը բաշխելու մասին, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման և տարեկան շահութաբաժինների չափի հաստատման հարցը

ՀԱՐՑ 5: 40,000,000 ՀՀ դրամի չափով գովազդային վիճակախաղի տարեկան շահումային հիմնադրամ ստեղծելու մասին

ՀԱՐՑ 6: Կանոնադրության նոր խմբագրությունը հաստատելու մասին

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2025 թվականի ապրիլի 30-ին:

Օրակարգի վերաբերյալ բոլոր փաստաթղթերի հետ կարող եք ծանոթանալ ցանկացած աշխատանքային օր ժամը 09^{00}-18^{00}՝ Ընկերության գրասենյակում՝ հետևյալ հասցեով՝ ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան փող., 3 շենք, 3-րդ հարկ (հիմնական մասնաշենքի 1-ին սեկցիայում), ինչպես նաև telcell.am կայքում:

ՑԱՆԿ

«ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի

1. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2024 թվականի տարեկան հաշվետվությունը:
2. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի արտաքին աուդիտի կողմից հաստատված Ընկերության 2024թ. ֆինանսական հաշվետվությունները:
3. 2025 թվականի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնելու համար առաջարկվող ընկերության վերաբերյալ տեղեկություններ:
4. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2024թ. տարեկան շահույթը բաշխելու մասին, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման և տարեկան շահութաբաժինների չափի հաստատման առաջարկը:
5. Կանոնադրության նոր խմբագրության նախագիծը:
6. Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկ:

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՌՑԱՆՑ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

ՀԱՐՑ 1: «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2024 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1-ին հարցի շրջանակներում ներկայացվելու են Գլխավոր տնօրենի և Խորհրդի նախագահի ուղերձները, 2024 թվականին կատարված աշխատանքները, ընկերության ռազմավարությունը, բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը: Ներառում է այն կարևոր դեպքերի նկարագիրը, Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը (Կառավարման մարմինների տարեկան զեկույցը), կազմակերպության նպատակները և կայունության հաշվետվությունը, կազմակերպության կորպորատիվ կառավարման զեկույցը և կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը:
Տարեկան հաշվետվությունների հաստատումը ներկայացվում է Ընդհանուր ժողովին:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 1

Հաստատել «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2024 թվականի տարեկան հաշվետվությունը:

ՀԱՐՑ 2: «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի արտաքին աուդիտի կողմից հաստատված Ընկերության 2024թ. ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

2-րդ հարցի շրջանակներում բաժնետերերի հաստատմանն է ներկայացվելու Ընկերության արտաքին աուդիտորի («ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ) եզրակացությամբ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 2

Հաստատել արտաքին աուդիտի եզրակացությամբ Ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող ֆինանսական տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

ՀԱՐՑ 3: «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թվականի աուդիտն իրականացնող անձի հաստատում

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգին համապատասխան իրականացված մրցույթի արդյունքներով Ընկերության տնօրենների խորհուրդը առաջարկում է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թվականի աուդիտն իրականացնող անձ հաստատել «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ին:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 3

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թվականի աուդիտն իրականացնող անձ հաստատել «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ին:

ՀԱՐՑ 4: 2024թ. տարեկան շահույթը բաշխելու մասին, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման և տարեկան շահութաբաժինների չափի հաստատման հարցը

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

4-րդ հարցի շրջանակներում բաժնետերերի հաստատմանն է ներկայացվելու Ընկերության 2024 թվականի գործունեության արդյունքում ձևավորված շահույթի բաշխման հարցը:
2024 թվականի շահույթը կազմել է 1 596 642 000 (մեկ միլիարդ հինգ հարյուր իննսունվեց միլիոն վեց հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամ: Տնօրենների խորհրդի 2025 թվականի ապրիլի 30-ին կայացված նիստով Խորհուրդը առաջարկում է բաժնետերերին վճարել ընդհանուր 1,250,000,000 (մեկ միլիարդ երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ՝ շահույթի **78%**-ը, այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց՝ 36 (երեսունվեց) ՀՀ դրամ (յուրաքանչյուր բաժնետոմսի շահութաբերությունը **9%):**

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 4

1. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ Խորհուրդը, հաշվի առնելով 2024 թվականի տարեկան ֆինանսական գործունեության արդյունքները, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկում է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ 31.12.2024 թվականի դրությամբ տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված 1 596 642 000 (մեկ միլիարդ հինգ հարյուր իննսունվեց միլիոն վեց հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամի չափով տարեկան զուտ շահույթից վճարել ընդհանուր 1,250,000,000 (մեկ միլիարդ երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ՝ որպես տարեկան շահութաբաժիններ, այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց՝ 36 (երեսունվեց) ՀՀ դրամ:
2. Տարեկան շահութաբաժինների վճարումները կատարել առավելագույնը մինչև 01/07/2025թ.-ը ներառյալ, դրամական միանվագ փոխանցմամբ, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա՝ 2025 թվականի ապրիլի 30-ի օրվա վերջի դրությամբ Ընկերության մասնակիցների ռեեստրում ընդգրկված բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն:
3. Շահութաբաժինները վճարելուց հետո մնացած շահույթը թողնել չբաշխված:

ՀԱՐՑ 5: 40,000,000 ՀՀ դրամի չափով գովազդային վիճակախաղի տարեկան շահումային հիմնադրամ ստեղծելու մասին

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

«Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գովազդային վիճակախաղի շահումային ֆոնդն ամբողջությամբ ձևավորվում է նախորդ տարվա գործունեության արդյունքում ձևավորված զուտ շահույթի հաշվին, ուստի՝ հաշվի առնելով գովազդային վիճակախաղերի կարևորությունը Ընկերության ծառայությունների և բրենդի ճանաչելիության բարձրացման գործում՝ Խորհուրդը առաջարկում է ստեղծել Գովազդային վիճակախաղի տարեկան շահումային հիմնադրամ՝ 40,000,000 ՀՀ դրամի չափով, որի օգտագործման կարգը որոշվում է Խորհրդի կողմից:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 5

Ստեղծել գովազդային վիճակախաղի տարեկան շահումային հիմնադրամ 40,000,000 ՀՀ դրամի չափով, որի օգտագործման կարգը որոշվում է Խորհրդի կողմից:

ՀԱՐՑ 6: Կանոնադրության նոր խմբագրությունը հաստատելու մասին

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

6-րդ հարցի շրջանակներում բաժնետերերի հաստատմանն է ներկայացվում Ընկերության կանոնադրության նոր խմբագրությունը հետևյալ փոփոխությունների համատեքստում.

1. Ավելացվում է Ընկերության կանոնադրական կապիտալը՝ պայմանվորված 10.09.2024 թվականի ժողովի որոշմամբ հաստատված Աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի հիման վրա 2025 թվականի մարտի 1-ից մինչև մարտի 26-ը իրականացված տեղաբաշխման հիման վրա,
2. Կանոնադրությամբ ժողովի իրավասությանը պատկանող 8.2 կետի 11-րդ ենթակետը և 1-ին, 15-րդ, 16-րդ. և 19-րդ ենթակետերի որոշ մասերը վերապահվել են Խորհրդի իրավասությանը,
3. 8.3 կետը համապատասխանեցվել է գործող Օրենսդրությանը:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 6

Հաստատել Ընկերության կանոնադրության նոր խմբագրությունը:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ գլխավոր տնօրեն՝
Արտյոմ Ղազարյան

«ԹԵԼ-ՍԵԼ» "ТЕЛ-СЕЛЛ" "TEL-CELL" 02703102 ARMENIAN OPEN JOINT-STOCK COMPANY ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

30.04.2025